

**Անահիտ Ի. Յահյամասիի**

*Բանասիր. գիտ. թեկնածու*

**ԳԱՐԵԳԻՆ ՍՐՎԱՆՁՏՅԱՆՑ ԵՎ  
ՍԱՂԵՂ ՀԵՂԱՅԱԹ**

Ազգագրության և բանագիտության հայ և պարսիկ  
ուսանողի մասերի գործունեության համեմատական քննություն\*

**Բանալի բառեր** - Գարեգին Սրվանձտյանց, Սաղեղ Հեղա-  
յաթ, առաջատար, մշակույթ, բանահյուսություն, ազգագրություն,  
պահպանում, Իրան, Հայաստան, հայրենասիրություն:

**Մուտք**

**Հայ իրականության մեջ** Գարեգին Սրվանձտյանցն առաջինն էր, որն իր հե-  
տևողական աշխատանքով ոչ միայն հավաքեց ու գրի առավ ժողովրդական բա-  
նահյուսությունը, այլև դրեց նրա գիտական ուսումնասիրության հիմքերը:

**Իրանում** բանագիտությունն ու ազգագրությունը ձևավորվել են համեմատա-  
բար ուշ՝ 20-րդ դարի սկզբին, և իրենց տեղը զբաղեցրել մշակույթի ու արվեստի  
համակարգում: Մինչ 20-րդ դարի սկզբին Սաղեղ Հեղայաթի կատարած ուսում-  
նասիրությունները Իրանում այս գիտություններն անտեսվել են ու չեն արժանա-  
ցել ուսումնասիրողների ուշադրությանը: Սակայն պարսկական գրականությունը  
նույնպես իր պատմության ընթացքում չի անտեսել ժողովրդական բանահյու-  
սությունն ու մշակույթը, որոնք իրենց էությանը միաձուլված են եղել նրան:

\* Հոդվածն ընդունվել է տպագրության 25.10.2019:

19-րդ դարի հայ ականավոր հոգևորական, գրող ու բանահավաք **Գ. Սրվանձտյանցը** (1840-1892) և 20-րդ դարի պարսիկ գրող ու բանահավաք **Ս. Հեդայաթը** (1903-1951), լինելով երկու տարբեր ազգերի և հավատի գրականագետներ, **բանահավաքչական աշխատանքի ասպարեզում միևնույն գաղափարի, ոճի, մտածողության և ճաշակի կրողներն էին**: Ազգի պատմության խոր ընկալումը, անհուն սերը հայրենիքի նկատմամբ և վերջապես ստեղծված տնտեսական ու քաղաքական ծանր պայմաններն այս գիտնականներին է՛լ ավելի են մղել դեպի իրենց ազգանվեր գործունեությունը: Գ. Սրվանձտյանցի և Ս. Հեդայաթի ժողովածուներում զետեղված են ժողովրդական առակներ, առած-ասացվածքներ, հանելուկներ և աղոթքներ: Նրանք վերլուծել և գնահատել են հեքիաթներն ու ժողովրդական երգերը, բացահայտել դրանց բնույթն ու էությունը, անդրադարձել աշխատանքային, հարսանեկան և օրորոցային երգերին: Բանահյուսական ուսումնասիրություններ կատարելուն զուգահեռ՝ Գ. Սրվանձտյանցն ու Ս. Հեդայաթը ճամփորդել են, և նրանց ուշադրության կենտրոնում են եղել իրենց հայրենի բնաշխարհը, ժողովրդի կենցաղը, հավատալիքները, սովորույթներն ու ավանդությունները, խոսակցական լեզուն, վարք ու բարքը: Երկու տաղանդաշատ գրականագետների ապրած դարաշրջանը, կյանքի ուղիները և գրական ու հետազոտական գործունեությունը, թեև տարբերվում են՝ պայմանավորված նրանց աշխարհայացքներով, համապատասխան միջավայրերով և զուտ անհատական մոտեցումներով, բայց և ունեն բազում նմանություններ, որոնց կանդրադառնանք սույն հրապարակման մեջ:

## 1. Գ. Սրվանձտյանցի և Ս. Հեդայաթի գործունեության դրդապատճառները

Գ. Սրվանձտյանցի և Ս. Հեդայաթի ուսումնասիրություններն ու աշխատանքները հիմք դրեցին իրենց ազգերի բանագիտությանը և ազգագրությանը: Նրանք, իրենց գործունեության ծավալման համար ունենալով ամուր հիմքեր, տարբեր վայրերում ձեռնամուխ եղան այս նվիրական գործին:

Գ. Սրվանձտյանցը, առաջնորդական պաշտոններ վարելով Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում, ականատես է լինում հայ գյուղացու տանջանքներին ու տառապանքներին: Ազգի հանդեպ անսահման սերը և պայքարելու ուժը նրան մղում են անդուլ աշխատանքի, որպեսզի ինչ-որ չափով կարողանա սպեղանի դնել իր ժողովրդի վերքերին: Գ. Սրվանձտյանցն իր բոլոր իղծերն ու երազանքներն

իրականացրեց հարստահարիչների, բռնության, ոճրագործության, պանդխտության, խեղճության և անուս-թերուս լինելու դեմ պայքարելու միջոցով: Նա, մոտիկից ծանոթանալով և ականատես լինելով Արևմտյան Հայաստանի հայ բնակչության տառապանքներին, ոչ միայն չէր հուսալքվում, այլև, է՛լ ավելի ոգևորվելով ու եռանդուն աշխատանք կատարելով, պայքարելու, դիմադրելու և դիմակայելու նոր ուժ էր հաղորդում իր ժողովրդին: Նա «Թորոս աղբար Հայաստանի ճամբորդ»-ի երկրորդ հատորում այսպես է դիմում իր ժողովրդին. «...խոսեցա թե ի՛նչքան անհնարություն, դժվարություն, կորուստ և մահ կա գաղթելու ճանապարհին վրա, և թե լավ է քիչ մը ևս սպասել, համբերել, թագավորը պիտի հիշի յուր ժողովուրդը, Աստված պիտի ողորմի վերջապես, օրեր պիտի փոխվին, չարերը պիտի պատժվին, աղեկ կառավարիչներ և արդար դատավորներ պիտի դրկե թագավորը, և զձեզ պիտի մխիթարե... Ամեն երկիր գիշեր կը լինի, խավար կունենա, բայց չէ՞ որ Աստված ամեն օր առավոտ կը բանա, լույս կուտա մեզ, ճմեռվանեն հետո՞ կուգա գարուն...»<sup>1</sup>:

Ս. Հեղայաթը նույնպես հաստատական և լուրջ մտայնությամբ էր կատարում իր աշխատանքը: Նրա կարծիքով՝ բանահյուսական արվեստի դրսևորումները ժողովրդական ոգու, հոգեբանության և աշխարհընկալման անմիջական ձևեր են: Նրա՝ այս գործին լծվելու առաջին դրդապատճառն արտահայտված է հետևյալ տողերում. «Իրանը դեպի արդիականացում է գնում: Այս զարգացումը հասարակության բոլոր շերտերում ակնհայտ է: Մտածելակերպերը գնալով փոխվում են, հինը ձևափոխվում է, ինչ որ հնացած է, վերանում, մի կողմ է թողնվում: Ցավալին այն է, որ այս նորարարությունների հետևանքով հեքիաթները, պատմությունները, հորինվածքները և ազգային երգերը, որոնք նախնիներից մնացած հիշատակներ են և փոխանցվել են սերնդեսերունդ, անհետանում և մոռացության են տրվում: Ազգային նման ստեղծագործությունները աննշան են համարել, նույնիսկ դրանց հավաքագրմամբ չեն զբաղվել»<sup>2</sup>:

Ս. Հեղայաթը բարձր է գնահատում ժողովրդական երգերը և դրանք համարում ժողովրդի հույզերի, հոգսերի ու ակնկալիքների անմիջական արտահայտություն: Նա նշում է, որ ժողովրդական երգերը կայուն տեղ ունեն յուրաքանչյուր ազգի քաղաքակրթության և մշակույթի մեջ: Ժողովրդական երգերը, ի տարբերություն հեղինակային խոսքարվեստի, ժամանակի ընթացքում փոփոխության չեն ենթարկվում, այլ պահպանվում են նույնությամբ: Ժողովրդական երգերի այս բարձր արժևորումներում իսկ ակնհայտ է Ս. Հեղայաթի նախանձախնդրությունը՝ ոչ միայն փրկելու ազգային մշակութային այդ գանձերը կորստից, այլև դրանք անխաթար ու ամբողջական ձևով փոխանցելու հետագա սե-

1 Սրվանձույանց Պ., Երկեր, հատ. 2, Եր., 1982, էջ 332-333:

2 Hédāyat S., Farhang-e 'āmyānē-ye mardom-e Īrān, 6<sup>th</sup> print, Tehran, ěntēš. Ćēsmēh, 1385, p. 163.

րունդներին: Ս. Հեղայաթի ուսումնասիրությունների մյուս դրդապատճառը և իր իսկ մտահոգությունը առնչվում են հասարակության մեջ տարածված նախապաշարումներին ու սնտոհապաշտությանը: Նրա կարծիքով՝ դրանք ժողովրդական զանգվածների շրջանում խավարամտության պահպանման գլխավոր պատճառներն են: Վերլուծելով և լուսաբանելով դրանց առաջացման ու ամրապնդման սոցիալ-պատմական պատճառները՝ նա փորձում էր առաջընթացը խոչընդոտող այդ չարիքի դեմ պայքարելու եղանակներ առաջարկել: Հենց այդ նպատակադրումն էր դարձել «Նեյրանգեստան» («Հրաշքների երկիր») երկը ստեղծելու շարժառիթը: Ս. Հեղայաթը համոզված էր, որ ուսումնասիրությամբ և հետազոտական աշխատանքներով ժողովրդական բանահյուսությունը, սովորույթները, ծեսերն ու ավանդույթներն իր ժամանակաշրջանի պատմության մաս կկազմեն:

## 2. Գարեգին Սրվանձությանց և Սադեղ Հեղայաթ. կյանքի և գործունեության համեմատություն



**Գարեգին Սրվանձությանց**



**Սադեղ Հեղայաթ**

<p>1. <b>Գ. Սրվանձությանցը</b> (1840-1892) ծնվել է Վանի Այգեստան քաղաքում՝ Սանդենց բազմանդամ ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է հայրենի քաղաքում, ապա՝ սովորել Վարազա վանքում Մկրտիչ Խրիմյանի հիմնադրած ժառանգավորաց վարժարանում:</p> <p>2. Գ. Սրվանձությանցը (մկրտության անունը՝ Օհանես) իր թաղի տարեց մամիկներից ու ծերերից լսել էր խորհրդավոր ու հեղափոխարար պատմություններ, հիմաստուն առած-ասացվածքներ, երգեր ու փոռեր, որոնք տարիներ հետո տեղ են գտնում բանագետի ուսումնասիրություններում:</p> <p>3. 19-րդ դարի սկզբներին Մխիթարյան միաբանները, որոնք կապեր ունեին եվրոպացի գիտնականների հետ, զգալի ներդրում ունեցան հայ բանագիտության զարգացման գործում: Այդ դարաշրջանում հայ բանահյուսության և ազգագրության ձևավորմանը մեծ նպաստ բերեցին մի շարք հայագետներ, որոնցից են Ղ. Ինճիճյանը (1758-1833), Մ. Բժշկյանը (1777-1851), Ինչու չէ նաև Խ. Աբովյանը (1809-1848), Մ. Թադիսյանը (1803-1858), Ղ. Ալիշանը (1820-1901), Գ. Խալաթյանը (1858-1912), Ե. Լալայանը (1864-1931), Սյր. Լիսիցյանը (1865-1947) և շատ ուրիշներ: Խ. Աբովյանը, ազգագրական մեծ աշխատանք կատարելով, իր գեղարվեստական սրբազանություններում գրի է առել զգալի թվով ազգագրական նյութեր:</p>	<p>1. <b>Ս. Հեղայաթը</b> (1903-1951) ծագումով ազնվական էր: Տարրական և միջնակարգ կրթություն ստանալուց հետո ուսումը շարունակել է նախ Բելգիայում, ապա՝ Ֆրանսիայում:</p> <p>2. Ս. Հեղայաթի մոտ մանուկ հասակում ծնված Իրանի անցյալի հանդեպ սերը և հեղափոխությունը ծեսերի, ավանդույթների, երգերի ու ասացվածքների նկատմամբ արտահայտվել են նրա գրեթե բոլոր սրբազանություններում: Ասում են՝ իրենց տանն ապրող դայակին՝ Օմուլ Լեյլին, ամեն անգամ հեքիաթ պատմելու համար Սադեղը երկու ղուռչ էր տալիս<sup>3</sup>:</p> <p>3. 19-րդ դարի սկզբներին Իրանում եղել են մարդիկ, որոնք ջանասիրաբար զբաղվել են պարսկական ժողովրդական բանահյուսությամբ և ազգագրությամբ: Ժամանակի տաղանդավոր գրականագետներից էր Հասան Մոդադամը (1898-1925): Եթե նրա անբուժելի հիվանդությունը չլիներ, հենց այդ ժամանակ կսկսվեին բանահյուսության (ֆոլկլորագիտության) տեսական ուսումնասիրությունները և այն գիտական հիմքերի վրա դնելը: Հետևաբար ազգային ժառանգության գոհարները մեծ մասամբ անհետացումից կիրկվեին<sup>4</sup>:</p> <p>««Ժողովրդական բանահյուսություն» արտահայտությունն առաջին անգամ Թեհրանի պետական համալսարանի դասախոս Ղոլամ Ռեզա Ռաշիդ Յասամին ընտրեց և օգտագործեց որպես «ֆոլկլոր»</p>
--	--

3 St'u Majalē-ye Sēpid o St'yāh, 1351, no 35, p. 5:  
 4 St'u Enjavī Šīrāzi S. A., Zarīfyan M., Gozarī va nazārī...dar farhang-e mardom, Tehran, 1371, p. 15:

4. Գ. Սրվանձպյանցն իր բեղմնավոր աշխատանքներով ասպարեզ է գալիս 19-րդ դարի 50-60-ական թթ. և ավելի է խորանում իր ուսումնասիրությունների մեջ 1870-1880-ական թվականներին: Նա, Տարոնի և Վասպուրականի գավառների լեռների, դաշտերի ու գետերի տեղագրությունը և նկարագրությունը մանրամասն ներկայացնելով, մի ամբողջ ծրագիր է առաջարկում գիտնականներին<sup>5</sup>:

Նա՛ որպես մեծ բանագետ, բանահավաք, ազգագրագետ և Հայ առաքելական եկեղեցու նվիրյալ հոգևորական, իր լուսավորական, գրականագիտական ողջ գործունեությունը նվիրում է հայ ժողովրդին: «Արխիվային փաստաթղթերի, ժամանակակիցների նամակների և սրբեկաված գրականության մանրակրկիտ ուսումնասիրությունը բերում է այն համոզման, որ Գ. Սրվանձպյանցը 19-րդ դարի երկրորդ կեսին Արևմտյան Հայաստանի բնատրամադրում կատարել է գործնական մեծ աշխատանք՝ հայրենասիրական, ժողովրդապահպանման, ազգագրական շարժումների նախապատրաստման, գյուղացիական զանգվածներից հարկերի բռնազանձումը մեղմացնելու ուղղությամբ<sup>6</sup>», - գրում է էմմա Կոստանդյանը: Անշուշտ, Սրվանձպյանցի գերագույն նպատակը, պատգամներն ու մտահոգություններն արտահայտված էին նրա ժողովածուներում, սակայն հեղինակը ցանկանում էր, որ լինեն գիտակ և ուժեղ անհատներ, որոնք պետք է արթնացնեին ժողովրդի միությունը և ինքնագիտակցությունը, նրան մղեին ինքնապաշտպանության «բանի և գրչով»:

բառի հոմանիշ...»<sup>7</sup>, - գրում է պարսիկ գրականագետ Ալի Բոլուքբաշին:

4. Ս. Հեղայաթի գրականագիտական բեղմնավոր աշխատանքները սկսվում են 20-րդ դարի 20-25-ական թթ. և ավելի խորանում 1930-1945-ական թթ.: Իրանում նա կարճ պատմվածքի՝ նովելի ժանրում առաջիններից մեկն էր, որ գրեց հասարակությանը հասկանալի, խոսակցական լեզվով և նրա բառ ու բանը օգտագործելով: Նա նաև առաջինն էր, որ ներկայացրեց ազգագրության և բանահավաքական ուսումնասիրության ծրագիր՝ գիտական հիմքերով:

Ս. Հեղայաթի սրբեկավորություններում կենտրոնական տեղ են զբաղեցնում իր երկիրը, հասարակ ժողովուրդն ու նրա կենցաղը, որոնց էլ նվիրել է իր լավագույն պատմվածքները: Նրա ուշադրության կենտրոնում էին նաև Իրանի նախախլամական շրջանի պատմությունը և մշակույթը: Նա հավաքում և գրի էր առնում ժողովրդական երգեր (սիրային, հարսանեկան, մանկական խաղեր, օրորոցայիններ), հեքիաթներ (հիմնականում՝ իրապատում և կենդանական), տոնածիսական ավանդույթներ ու սովորույթներ: Ս. Հեղայաթին հետաքրքրում էին հասարակության մեջ տարածված հավատալիքները, նախապաշարմունքները, ժողովրդական ասացվածքներն ու դարձվածքները, որոնք էլ դառնում էին նրա գեղարվեստական սրբեկավորությունների հիմնական արտաձևը: 20-րդ դարի սկզբին՝ հարստահարությունների և քաղաքական հալածանքների դեմ պայքարի շրջանում, Ս. Հեղայաթը փորձում էր ցույց տալ ազգագրության և բանահյուսության կարևորությունը:

5 Կոստանդյան է., Գարեգին Սրվանձտյանց (Կյանքը և գործունեությունը), Եր., ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2008, էջ 53:  
 6 Նույն տեղում, էջ 9:  
 7 Bolukbashi A., Dar farhang-e xod zistan va be farhanghaye digar negaristan, Tehran, 1389, 2nd print, p. 67.

5. Գ. Սրվանձոյանցի գրականագիտական շնորհները երևան էին եկել դեռևս պատանեկության տարիներից: Նրա գրական առաջին աշխատանքները՝ աշակերտական ուրանավորները և 5-րդ դարի պատմական նշանավոր իրադարձությունների մասին մի շարք հոդվածներ, տպագրվել են «Արծվի Վասպուրական» ամսագրի էջերում, որի հիմնադիրն էր Մ. Խրիմյանը: 1863 թ. Սուրբ Կարապետի վանքում առաջին անգամ հրատարակվում է «Արծվիկ Տարօնոյ» պարբերականը: Գ. Սրվանձոյանցը փայլուն աշխատանք է կատարել որպես «Արծվի Վասպուրական»-ի փոխխմբագիր և «Արծվիկ Տարօնոյ»-ի խմբագիր: «Արծվի Վասպուրական»-ը հրատարակվում էր գրաբար, իսկ «Արծվիկ Տարօնոյ»-ը՝ աշխարհաբար, սակայն երկուսն էլ ժողովրդական լայն զանգվածներին գերազանց կերպով լրատվական ծառայություն են մատուցում և նրանց բողոքի ձայնը լսելի դարձնում: Գ. Սրվանձոյանցի և Մ. Խրիմյանի «Այդ աշխույժ գործունեությունը երկար չի տևում: 1865 թ. Տարոնի ցեցերը և խավարամուկ հոգևորականները... ծանր ամբաստանում են Խրիմյանին և նրա գործակիցներին... Ընդմիջոյ փակվում է «Արծուիկը»...»<sup>8</sup>:

6. Գ. Սրվանձոյանցի առաջին գործերը «Անկումն Արշակունեաց հարստութեանց» և «Շուշան Շավարշանա» պիեսներն էին, որոնք իրենց քարոզած գաղափարներով ժողովրդի մեջ հաջողություններ ունեցան: 1874 թվականից սկսած՝ մեկը մյուսի հետևից հրատարակվեցին Գ.

5. Ս. Հեղայաթը դպրոցական ընկերների համար հրատարակում էր «Սեդայե ամվաթ»<sup>9</sup> («Մեդայների ձայնը») պատի թերթը: Պարբերական մամուլը, մասնավորապես՝ «Սոխան» («Soxan») և «Մուսիդի» («Musiqi») ամսագրերը, նպաստավոր պայմաններ էին ստեղծում՝ գիտնականի հետազոտությունները հայրենակիցների շրջանում տարածելու համար: Երևան են գալիս ժողովրդական բանահյուսության և ազգագրության նմուշները, որոնք արդեն ուսումնասիրության նոր հեռանկարներ են բացում Իրանի բանարվեստի առջև:

1939 թ. Ղոլամհոսեյն Մինբաշյանը հիմնադրում է «Մուսիդի» ամսագիրը, որի խմբագիր է նշանակվում Ս. Հեղայաթը: Նրանց հետ համագործակցում են Փ. Նաթել Խանլարին, Ալի Ասղար Սորուշը, Մ. Ֆ. Սոբհի Մոհթադին, Նիմա Յուշիջը և Աբդու Հոսեյն Նուշիը: Սա հրաշալի առիթ էր Ս. Հեղայաթի համար, որը հնարավորություն է ստանում ամսագրում տպագրելու ազգագրությանը և ժողովրդական բանահյուսությանը նվիրված հոդվածները՝ «Թարանեհայե ամյանե»<sup>10</sup> («ժողովրդական երգեր») և «Մաթաիայե ֆարսի»<sup>11</sup> («Պարսկական հեքիաթներ»), և մի շարք այլ հեքիաթներ<sup>12</sup>: Ամսագիրն ընդամենը երկու տարի անց՝ 1941 թ., փակվում է:

6. Ս. Հեղայաթի բազմաժանր ստեղծագործության մեջ պայմանականորեն կարելի է առանձնացնել հետևյալ բաժինները՝ 1) ազգագրության և ժողովրդական բանահյուսության ուսումնասիրություններ՝ «Նեյրանգեստան» («Հրաշքների երկիր») և «Օսանե» («Հեքիաթ»), 2) ֆոլկլորի, ժողովրդա-

8 Կոստանդյան Է., 62վ. աշխ., էջ 88:  
 9 «Sēdaye amvāt».  
 10 Majalē-ye Mūsīqī, Sādeq Hēdāyat, tarānēhāye ’āmyānē, 1318, sal-e aval, no. 6-7.  
 11 Majalē-ye Mūsīqī, Sādeq Hēdāyat, tarānēhāye ’āmyānē, 1318, sal-e aval, no. 9.  
 12 St’u Majalē-ye Mūsīqī, Aqā mūsē, Sāngūl va māngūl, 1318, sal-e aval, no. 8. Laçak küçülüye qērmēz, 1319, sal-e dovom, no. 2. Sang-e Sabūr, 1320, sal-e dovom, no. 6-7:

Արվանձոյանցի ժողովածուները: Նրա երկերը, գրի առած բանահյուսական նյութերը, նամակներն ու դիմումները ամփոփված են երկու հատորներում: Առաջին հատորն ընդգրկում է բանահյուսական բնույթի աշխատությունները՝ «Գրոց և բրոց» (Կ. Պոլիս, 1874), «Հնոց և նորոց» (Կ. Պոլիս, 1874), «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» (Կ. Պոլիս, 1874), «Մանանա» (Կ. Պոլիս, 1876), «Համով-հոտով» (Կ. Պոլիս, 1884): 1879 թ. նրա առաջին ուղևորության արդյունքը եղավ «Թորոս աղբար Հայաստանի ճամբորդ» աշխատության առաջին հատորը, իսկ 1884 թ.՝ դրա երկրորդ հատորը, որում ներկայացված են Արևմտյան Հայաստանի գավառների և նահանգների նկարագրությունն ու ժողովրդագրությունը: «Թորոս աղբարը...» ընթերցողին ծանոթացնում է Հայաստանի անցյալին ու բնության գեղեցկությանը և բացահայտում հայ ժողովրդի սպեղծագործական հանճարը: Իսկ ինչ վերաբերում է «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» պատումին, այն մեծագույն հայրնագործություն է հայ մշակույթի պատմության մեջ, որը փաստում է, որ հայ ժողովուրդը նույնպես ունի իր ազգային էպոսը: Բազմաթիվ ժողովրդական երգեր ենք գտնում «Մանանա» և «Համով-հոտով» ժողովածուներում:

Կարելի է առանձնացնել Գ. Արվանձոյանցի լուսավորական գործունեության երկու ուղղություն՝ հրապարակախոսական և մանկավարժական: Նրա՝ հայ ժողովրդի արևմտահայ հարվածի 19-րդ դ. 60-80-ական թվականների տնտեսական անմխթաթար վիճակը և ազգային - ազգապարական շարժումները, ազգագրական, հնա-

կան մշակույթի և ազգագրության գիտական ուսումնասիրության մեթոդաբանության ծրագրի ներկայացում, 3) ժողովածուներ՝ «Չենդե բե գոտ», («Կենդանի թաղվածը»), «Սե դաթրե խուն», («Երեք կաթիլ արյուն»), «Սայե ոռչան», («Լուսավոր սովեր»), «Սագե վելգարդ», («Թափառաշրջիկ շունը»), «Ալավիյե խանում»,<sup>13</sup> որոնք ընդգրկում են ռեալիստական պատմվածքներ, 4) երգիծական սպեղծագործություններ՝ «Խարե դաջար» («Նեդի ավանակը»), «Թուփե մորվարի»<sup>14</sup> («Մարգարիտե թնդանոթը») և այլն, 5) դրամատիկական պատմվածքներ՝ «Մազար», «Փարվին դիթարե Սասան» («Փարվին Սասանի դուստրը») և այլն, 6) թարգմանություններ պահլավերեն հուշարձաններից՝ «Քարնամեյե Արդեշիրե Բաբաքան», «Չանդե Վահման յասն» և այլն, 7) թարգմանություններ արքայազնական հայրնի գրողներից՝ Անտոն Չեխով, Ֆրանց Կաֆկա, Ժան Պոլ Սարրոր, Ռոժե Լեսկո և այլն, 8) Գիտական և փիլիսոփայական հոդվածներ, գրաքննադատական աշխատություններ (խոսքը վերաբերում է հարկապես Օմար Խայամի սպեղծագործություններին), ուղեգրություններ և այլն: «Օսանե» («Հեքիաթ», 1931 թ.) և «Նեյրանգեստան» («Հրաշքների երկիր», 1933 թ.) աշխատանքների հրատարակումից հետո Իրանում նոր թափ են առնում ազգագրական ու ժողովրդական բանահյուսության ուսումնասիրությունները: Ռուս արևելագետ Ե. Ա. Կիսլյակովն այս կապակցությամբ գրում է. «Պարսկական հասարակության մեջ ժողովրդական արվեստի և ֆոլկլորի նյութերի հավաքման նկատմամբ հետաքրքրությունը, հեղինակի (Ս. Հեդայաթ - Ա. Յ.) խոսքերով, արթնա-

13 «Zëndê bê gour», «Sê qatrê xun», «Sâyê roşan», «Sag-e vêlgard», «Alavîe Xnum».  
 14 «Tup-e morvâri», «Xar-e dajâl».



խոսական, աշխարհագրական - ուղեգրական, մանկավարժական - լուսավորական գործունեությունը բացահայտող հողվածները զետեղված են գրքի երկրորդ հատորում: Այս նյութերի մեծ մասը հեղինակի կենդանության օրոք տպագրվել է «Արծվիկ Տարօնոյ» երկշաբաթաթերթում: Արվանձտյանցն իր ընթերցողին ազգագրությունը ներկայացնում է պատմաաշխարհագրական և այլ նյութերի միաձուլումով: Արևմտյան Հայաստանում նա գրչով իր հայրենասիրական զգացումներն էր արտահայտում: «Այդ ժողովածուներում, Արվանձտյանցը հանդես է գալիս իբրև խորագետ հետազոտող, գիտական հիմքերի վրա է դնում հայ բանահյուսության ուսումնասիրությունը»<sup>15</sup>, - գրում է Էմմա Կոստանդյանը:

Ազգագրության և բանահավաքչության կազմակերպման գործում Գարեգին Արվանձտյանցի ծառայությունները և կանոնավոր հիմքերով մշակած սկզբունքները հայ գրականագետների կողմից բարձր են գնահատվել: «Հայ ազգագրության մեջ 19-րդ դարի երկրորդ կեսը նշանավորվում է Գարեգին Արվանձտյանցի (1840-1892) բեղմնավոր գործունեությամբ... Նրա ամենամեծ ծառայությունը բանահավաքչական գործի կազմակերպումն էր: Նրան հետևեցին շարերը՝ ձեռքի տակ ունենալով նրա ծրագիրը՝ «Գրոց-բրոց»<sup>20</sup>, - գրում է Վ. Բդոյանը: Է. Կոնստանդյանն այս մասին գրում է. «Գարեգին Արվանձտյանցն առաջինն էր հայ իրականության մեջ, որ հետևողականորեն զբաղվեց ժողովրդական

ցավ իր «Ներանգեստան» գրքի լույսընծայումից հետո (1933 թ.)»<sup>16</sup>:

Ս. Հեղայաթը նույնիսկ հետաքրքրված էր հարևան երկրների հոգևոր մշակույթով: Նա բանահավաքչական ուսումնասիրություններում, իր «Մշակույթ ժողովրդական»<sup>17</sup> ժողովածուում անդրադառնում է ժողովրդական երգերին (կարակերգեր) և Կոմիտաս վարդապետի մշակած հայկական գեղջկական երգերի ցանկից հիշատակում «Գնացեք տեսեք ո՞վ է կերել այծը, Գնացին տեսան գայլն է կերել այծը...» հայտնի կարակերգը<sup>18</sup>:

Ս. Հեղայաթի ամենամեծ և անուրանալի ծառայությունը եղավ նաև ազգագրության և ժողովրդական բառ ու բանի հավաքման գործի կազմակերպումը և գիտական հիմքերի վրա դնելու ուղղությամբ գործադրած ջանքերը: Այդ ծրագիրը՝ որպես առաջինը, անշուշտ անթերի չէր: Այդուհանդերձ, նրան հետևող բազմաթիվ բանահավաքներ հետագայում մեծ աշխատանք կատարեցին: Ս. Հեղայաթի ծրագիր-հողվածները հաջորդաբար տպագրվում են «Սոխան» ամսագրի չորս համարներում:

Ս. Հեղայաթի կենդանության օրոք՝ 1932 թ., լույս է տեսնում նրա առաջին և մեզ հայտնի միակ ուղեգրությունը՝ «Էսֆահան նեսֆե ջահան»<sup>19</sup> («Իսպահանը աշխարհի կեսը»), որում բացահայտվում են նրա ուսումնասիրած՝ պատմամշակութային և բանահյուսական գոհարներում անթեղված խոր գաղտնիքները: Ենթադրվում է, որ գոյություն ունեն երկու ուրիշ նման ուղեգրություններ, որոնցից մեկը վերնագրված է «Ռու-

15 Կոստանդյան Է., նշվ. աշխ., էջ 72:

16 Кисляков Н., Советская этнография-2, М., 1949, с. 231.

17 Hēdayat S., նշվ. աշխ., p 210.

18 Տե՛ս Կոմիտաս, Երկերի ժողովածու, հատ. 1, կազմեց և խմբագրեց Ռ. Աթայանը, Եր., 2000, էջ 172:

19 «Ēsfahān nēs-f-e jahān».

20 Բդոյան Վ., Հայ ազգագրություն, Եր., 1974, էջ 16-20:

բանահյուսության հավաքման, գրառման և ուսումնասիրության խնդրով»<sup>21</sup>:

7. Գ. Սրվանձդյանցը «Գրոց ու բրոց»-ի առաջին հատվածում ասում էր. «Ահա այս խորհրդով իմ երկերես իբրև ընծա այս գրվածքս կը նվիրեմ, զոր ընդրեցի. ոչ որպեսզի այսու ես պատիվ մը կամ անուն մը ձեռք բերեմ, այլ գիտելով թե, դուք ունիք ճաշակ այսպիսի պտուղներու, զորս քաղած եմ հայրենի մրգաստանեն այն ձեռներով, որո մատերը ձեզնէ քաջալերված եղեր են գրիչը շարժելու...»<sup>23</sup>: Նրա արևմտահայ հեղինակներից Գ. Շերենցը, Պ. Նաթանյանը, Մ. Միրախորյանը և Ս. Հայկունին, իսկ արևելահայերից Տ. Նավասարդյանը, ձեռքի փակ ունենալով նրա ծառայությունները՝ որպես ծրագիր, եռանդուն աշխատանք ձեռնարկեցին և աշխուժացրին բանահավաքչական ուսումնասիրությունները:

8. Գ. Սրվանձդյանցի հայտնաբերած ու գրի առած բանահյուսական մեծարժեք նյութերը, գրական, ազգագրական և ուղեգրական երկերը բարձր են գնահատվել հայ գրականագետների կողմից: Ակադեմիկոս Արամ Ղանալանյանն այս կապակցությամբ գրում է. «Հայ բանագիտության համար Գարեգին Սրվանձդյանցը պատմական աննախադեպ և բացառիկ դեր է կատարել, հայտնագործելով հայ ժողովրդի սրբեղծած ազգային մեծ Վեպի առաջին պատումը»<sup>24</sup>: Գ. Սրվանձդյանցի հրատարակած ժողովածուների մասին հայագետ Գրիգոր Խալաթյանցն արտահայտել է իր կարծիքը, որը զեպտելված է Ա. Ղանալանյա-

յե ջաղեյե նամնաք»<sup>22</sup> («Թաց ճանապարհի վրա»), իսկ մյուսը, ցավոք, այդպես էլ չի գտնվել:

7. Ս. Հեղայաթը ոչ միայն ինքն էր ջանասիրաբար զբաղվում այս գործով, այլև խրախուսում էր նաև իր մտերիմներին՝ աջակից լինելու և համագործակցելու: Նրա հորդորներով շատ ու շատ նյութեր կորստից փրկվեցին, և բազմաթիվ ուսումնասիրողներ սկսեցին գիտականորեն զբաղվել բանագիտական աշխատանքով:

Պեպոք է ընդգծել, որ իր ծառայություններով Ս. Հեղայաթը դարձավ շատերի ուսուցիչը: Նրանից հետո այս աշխատանքները շարունակում են այլ անձինք՝ Մանուչեիր Սոթուդե, Մոհամմեդ Զաֆար Մահջուբ, Ղոլամ Հոսեյն Սաեդի, Սեյեդ Աբուղասեմ Էնջավի Շիրազի, Զալալ ալ Ահմադ, Սամադ Բեիրանզի, Ահմադ Շամլու, Ալի Բուրքբաշի և այլք:

8. Պարսիկ գրող և բանագետ Ա. Էնջավի Շիրազին, որը Ս. Հեղայաթի ժամանակակիցն է և նրա հավատարիմ աշակերտն ու հետևորդը, այսպես է գնահատում իր ուսուցչին. «Իրականում նա մեզ մարդկության այս գիտությանը ծանոթացրեց: Նա չափազանց սիրում էր ժողովրդական բանահյուսությունը: Թեկուզ անցած փասնամյակներում մի քանի հոգի զբաղվել են այս գործով, բայց Հեղայաթն է հիմնադիրը: Նա է առաջինը, որը մեզ գիտական ճիշտ ուղին մատնացույց արեց... Հեղայաթը ժողովրդական բանահյուսության ճանաչողության, արժևորման և դրա կարևորության գիտակցման հար-

21 Կոստանդյան Է., նշվ. աշխ., էջ 5:

22 «Rüy-e jādēye nämnāk».

23 Սրվանձդյանց Գ., Գրոց ու բրոց, Երկեր, հատ. 1, Եր., 1978, էջ 31:

24 Ղանալանյան Ա., Դրվագներ հայ բանագիտության պատմության, Եր., 1985, էջ 96:

<p>նի «Դրվագներ հայ բանագիտության պատմության» գրքում. «Մեծ է այն ծառայությունը, որ Դուք մատուցեք և շարունակում եք մատուցել հայ ժողովրդական գրականության Ձեր թանկագին ժողովածուներով...»<sup>26</sup>: Ուստի, նշում է է. Կոստանդյանը, Գ. Խալաթյանցը «Ծրագիր հայ ազգագրութեան և ազգային իրավաբանական սովորությունների» աշխատությունը ծնունդ է Գ. Սրվանձությանցին և բարձր է գնահատում նրա դերը հայ ազգագրության ու բանահյուսության զարգացման գործում<sup>28</sup>:</p> <p>9. Գ. Սրվանձությանցն իր «Օրվան խնդիրներ» հոդվածում ընդդիմանում է միջնադարյան դպրոցի ուսմունքին հեփ-կոդ հոգևորականներին, որոնք կնոջը պիղծ անոթ էին համարում: Նա գտնում է, որ Քրիստոսը չի դրել էգի և արուի խտրություն: Սրվանձությանցը հիացմունքով է խոսում հինգերորդ դարի հերոսուհի հայ կնոջ մասին և հորդորում իր ժամանակի կանանց հեփուել նրանց օրինակին: Նա մեծ հավատ ուներ կնոջ ունակությունների և նրա ֆիզիկական ու հոգեկան կարողությունների նկատմամբ<sup>29</sup>: Հիացմունքով է խոսում հայ կնոջ մասին և մեծ նշանակություն տալիս հայոց պատմության մեջ նրանց ունեցած տեղին ու դերին և «Թորոս աղբար»-ի առաջին հատորում՝ «...կը զարմացնե այցելու մը, վասն զի մեր Հայաստանի վանքերեն ոչ մեկուն կը նմանի. Բայց իսկույն կը լուծվի զար-</p>	<p>ցում մեր առաջնորդն ու ուսուցիչն է»<sup>25</sup>: Գրականագետ Փարվիզ Նաթել Խանլարին, բարձր գնահատելով Հեղայաթի տաղանդը, ասում է, որ թեև ժողովրդական բանահյուսության օգտագործումը գրականության մեջ Դեհիսողային է վերագրվում, սակայն Հեղայաթն էր այն մարդը, որն այս գործը գիտական պատշաճությամբ ու պատիվ բերող մակարդակով կատարեց և իր ստեղծագործություններով պարսկերենն ավելի արտայայտիչ ու նուրբ դարձրեց<sup>27</sup>:</p> <p>9. Ս. Հեղայաթի ուշադրության կենտրոնում են եղել կանանց բարոյահոգեբանական խնդիրները: Նա նուրբ և զգացմունքային երանգներով է ներկայացնում իր պատմվածքների՝ արարեր խավերի պատկանող հերոսներին, որոնք սովորելու, սիրելու և ապրելու տենչով են փոքրված, սակայն սոցիալական անհավասարության և կյանքի ծանր պայմանների ճնշման տակ կեղծվում են: Ահա այսպես Ս. Հեղայաթը ճշմարտության և արդարության որոնման ճանապարհին ստեղծում է իր նովելները: Նրա «Աբջի խանում», «Քաթիյա», «Լալե»<sup>30</sup> և այլ պատմվածքներում ներկայացված կանայք պատկանում են փարբեր դասակարգերի ու խավերի: Սոցիալական ու հասարակական դաժան և ծանր ճնշումները նրանցից շարժեցին զրկել են իրենց իրավունքներից ու կյանքի իրական հաճույքներից: Նշենք, որ կանանց կերպարների հանդիպում ենք Հեղայաթի գրեթե</p>
--	---

25 Rūznāmē-ye Ettelā'āt, Gōfiōgū bā Enjavī Širāzi darbārē-ye Hēdāyat, Tehran, 1354, no. 14938, p. 21.  
 26 Դանալանյան Ա., նշվ. աշխ., էջ 95:  
 27 Տե՛ս Majalē-ye Sepīd o siyāh, 1346, vol. 15, no. 11, էջ 15:  
 28 Տե՛ս Կոստանդյան Է., նշվ. աշխ., էջ 7:  
 29 Տե՛ս նույն տեղում, էջ 149:  
 30 Ābji xānom», «Katīyā», «Lāleh».

մանքն, երբ իմանա թե վանքիս փնտր- սությունն ու փեսայությունը ոչ եպիսկոպոսի, ոչ վարդապետի, ոչ քահանայի և ոչ մյուսեվելիի է հանձնված, այլ ժրագլուխ փիկնոջ մը, այն է Տիկին Մարիցա Գափեմյան...»<sup>31</sup>:

10. Գ. Սրվանձությանցը, հոգևորական լինելով հանդերձ, հաճախ արելությամբ և արհամարհանքով է նկարագրում առանձին հոգևորականների կենսակերպը՝ ընդգծելով նրանց հոգու աղքատությունը, ազատությունը և կաշառակերության մոլուցքը: «Թորոս աղբար»-ի հեղինակը մերկացնում է հոգևորականների փոփոխությունն ու կոյր բարեպաշտությունը: Քննադատելով հայ հոգևորականներին՝ նա գտնում է, որ հոգևորականները եկեղեցին ծառայեցնում են իրենց շահերին: «Բազմաթիվ հարցեր է քննարկում «Օրոսան խնդիրներ» հողավածաշարը՝ ժողովրդի և եկեղեցու, եկեղեցական և եկեղեցու կրոնական ավանդույթների և կրոնագրքերի, «Պոլոժենիայի» քննադատություն»<sup>34</sup>:

11. Գ. Սրվանձությանցը «Գրոց ու բրոց»-ի մեջ ներկայացնում է մի դեղաբույսի վերաբերող ավանդություն-հավատարիքի հայկական փարբերակը. «Լոշտակ անունով բույս մը կա, որ Մշո աշխարհին մեջ հաճախ կը գտնվի, առավելապես Ս. Կարապետ վանքի բոլորը... Այս այն բույսն է, որի արմատը մարդանման ըլլալ կը համարեն, և թե մինչև անգամ անոնց մեջ արուն ու էգն ալ հայտնի են: Թե այս արմատը հանելու համար աղոթք մը ունին, և թե երբ կը կտրեն յուր մյուս կտորներեն, ահագին ձայնով կը ճչա. Ուլ

բոլոր պատմվածքներում:

10. Ս. Հեղայաթի հեգնանքից զերծ չեն մնում իսլամական կրոնի հոգևոր սպասավորները: Նա հաճախ քննադատում, դատապարտում և խոր արելության մեջ արհամարհանքով է նկարագրում նրանց: «Ալբարսիաթ օլ Իսլամիյաթ ֆել բելադ օլ-Ֆարանջիյե»<sup>32</sup> («Իսլամի առաքելությունը եվրոպական երկրներում») պատմվածքն այս խնդիրը բացահայտող վառ օրինակներից է, որը 1930 թ. ներկայացվում է երեք օրաթերթային զեկույցների ձևով, իսկ առանձին գրքով լույս է փետնում 1970 թ.: Գիրքը փպագրվելուց հետո գրաքննության է ենթարկվում, այնուհետև՝ արգելվում<sup>33</sup>:

11. Ս. Հեղայաթը «Նեյրանգեստան»-ում չի շրջանցում դեղաբույսերի մասին պարսկական աղբյուրներում վկայված փոփոխությունները և դրանց վերաբերող հավատարիքները: Նա «Մեհրե գյահ» («Մարդարմատ») դեղաբույսի վերաբերյալ փոփոխություններ է քաղել Մոհամեդ Հոսեյն իբն Խալաֆ Թաբրիզի «Բորհանե դաթե» և Ջամալեդին Հոսեյն էբն Ֆախրեդդին Հոսեյն էնջավի Շիրազի «Ֆարհանգե Ջահանգիրի» բառարաններից, որոնցում նշվում է, որ այն մարդանման բույս է և Չինաստանում է աճում:

31 Սրվանձությանց Գ., Գաբեգին Սրվանձությանց, Երկեր, հատ. 2, Եր., 1982, էջ 235:

32 «Alb'asiat ol Islamiyat fel belad ol faranjīye».

33 Qāsēmzādēh M., Rüy-e jādē-ye namnāk, Tehran, entēš. Kārūn, 1387, p. 19.

34 Կոստանյան Է., Աշխ., էջ 134:

<p>մը կամ հավ կը կապեն այդ մարդարմատին, որպեսզի երբ ճշա՝ այն ուլը կամ հավը անոր ձայնին զոհ լինի»<sup>35</sup>: Սարգիս Հարությունյանն այս բույսի անվան մի այլ տարբերակ է ներկայացնում, որը դրմագահներին պատկանող լայնատերև, երկար արմատներով մարդակերպ բույս է՝ Հայկական լեռնաշխարհում շատ տարածված, հնուց օգտագործվում է բժշկության մեջ՝ իբրև դեղաբույս, արդի խոսակցական լեզվում կոչվում է նաև «Հայկական ժենշեն»<sup>36</sup>:</p>	<p>Արմատները նման են մարդու մազերի, էզն ու արուն հյուսվել են իրար և ուրբերով ամրացել: Ըստ ժողովրդական հավատալիքների՝ այն քաղողը մի քանի օրից անխուսափելիորեն մահանում է: Այդ պատճառով էլ այդ բույսն արմատահան անելու համար պարանի մի ծայրը կապում էին նրանից, իսկ մյուս ծայրն ամրացնում որսկան շան մեջքին: Կենդանուն հրապտում էին որսով: Շունը վազում էր որսի հետևից, և բույսն արմատով դուրս էր գալիս: Շունը մի քանի օրից սատկում էր<sup>37</sup>:</p>
--	--

Գ. Սրվանձտյանցը և Ս. Հեղայաթը, տիրապետելով իրենց մայրենի լեզվի նրբություններին, ժողովրդական բանահյուսության հիմքի վրա գրական այնպիսի գանձեր ստեղծեցին, որոնք մեծ արժեք ունեն: Գ. Սրվանձտյանցի «Երկեր»-ի առաջին հատորի նախաբանում կարդում ենք. «Ավելի ուշ, 1915 թ. անդրադառնալով Սրվանձտյանցին և նրա բանահյուսական, ազգագրական ժողովածուներին, Հովհաննես Թումանյանը նրան համարել է «Մեր անուշ, հայրենախոս բանաստեղծը», իսկ նրա գրքերն էլ համեմատել է բուրումնալի ծաղկեփնջերի հետ: «Մի Աբովյան կամ մի Սրվանձտյանց,- գրել է նա (Հ. Թումանյանը – Ա. Յ.),- կենդանի ծաղիկներից են կազմում իրենց փնջերը, որոնք, ինչպես էլ կապված լինեն, միշտ հոտավետ են ու հրապուրիչ»<sup>38</sup>: Իսկ ֆրանսիացի գրող Ժան Կարբորը Ս. Հեղայաթի մասին գրել է. «Սադեղ Հեղայաթն այն ականավոր դեմքն է, որը լավատեղյակ էր Արևմուտքի հին գրականությանը, իսկ Արևմուտքից յուրացրած՝ եվրոպական ծաղկանոցում աճած վարդերը հաջողությամբ պատվաստում էր Իսֆահանի կարմիր վարդերի հզոր թփերին»<sup>39</sup>:

Երկու տաղանդաշատ բանագետներն ապագա հետազոտողներին հորդորում էին ուշադիր, բժախնդրությամբ և գիտակցաբար մոտենալ բանագիտական նյութեր հավաքելու, դասավորելու և ներկայացնելու գործին: Ըստ Գ. Սրվանձտյանցի՝ «Այս խնդրուն հատուկ ուշադրություն տալ պետք է. փափուկ և խորին

35 Սրվանձտյանց Գ., Երկեր, հատ. 1, էջ 43:

36 Տես Հարությունյան Ա., Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ, Եր., ԵՊՀ հրատ., 2006, էջ 334-335:

37 Տես Hedayat S., Գլվ. աշխ., էջ 104:

38 Սրվանձտյանց Գ., Երկեր, հատ. 1, էջ 24-25:

39 Mōnti V., Sādēq Hēdāyat va āsar-e ū, maqālē-ye Zān Kāmbōrd, tarjome-ye Hasan Qaemyān, Tehran, 1st print, 1382, p. 12.

ուշադրություն...Ասոնք ոչ միայն զվարճալի և պիտանի կը լինին ուսանողին, այլ և նոր ու մեծ լույս կուտան մեր հայկական լեզվին, մեր ազգային հնագիտության ու պատմության, որք լի են թյուր հասկացողությամբ»<sup>40</sup>:

Ս. Հեղայաթը բանագիտության ուսումնասիրությունը պարզապես ժամանցի աղբյուր չէր համարում և ուսումնասիրողներին հասցեագրված իր մեթոդական ուղեցույց-հոդվածում հորդորում էր աշխատանքին մոտենալ լրջորեն ու տրամադրված, իսկ ահա գտած նյութերը չպետք է փոփոխությունների ենթարկել: Նա նման նյութերով զբաղվողներին այսպես էր դիմում. «Ժողովրդական բանահյուսությունը զվարճանք չէ. նրան հպանցիկ չպետք է մոտենալ: Այս գործի համար համբերություն, իմացություն, ճիշտ մտածողություն և գիտական տեղեկացվածություն է հարկավոր: Այն փաստաթուղթը, որտեղ փոփոխություն է արված, կամ նախադասությունները գրական կառուցից հանված են, կամ բանահավաքն ըստ իր ճաշակի բարոյական, կրոնական, խրատական մտքեր է ավելացրել, որևէ արժեք չի ներկայացնում»<sup>41</sup>:

Ժողովրդի անցյալը, վարք ու բարքը, հավատալիքներն ուսումնասիրելով, նրա բառ ու բանը գրի առնելու պատասխանատվությունը ստանձնելով՝ այս ականավոր բանագետներն այլոց հանձնարարությունը չէ, որ կատարում էին, և ոչ էլ միջնորդի ու խորհրդատուի առաքելություն էին իրականացնում: Այդ արժեքները կորստից և անհետացումից փրկելն իրականում նրանց սեփական մտահոգությունների ու տառապանքի արդյունքն էր, և ձեռքի տակ եղած հավաստի փաստերն ապացույցն են այն իրողության, որ ազգագրության և բանագիտության նյութերի կարևորումը, պահպանումն ու գիտական աստիճանի բարձրացումը երկու գիտնականների ջանքերի արդյունքն են: Նրանց բոլոր ստեղծագործություններում տեսանելի են իրենց երկիրը, հասարակ ժողովուրդն ու կենցաղը, որոնց էլ նվիրել են իրենց լավագույն գործերը: Նրանք համոզված էին, որ ժողովուրդը մեղավոր չէ կեցության ծանր պայմանների համար. բոլորն էլ երջանիկ և ուրախ ապրելու հավասար իրավունք ունեն:

Գ. Սրվանձտյանցը և Ս. Հեղայաթն աչքի էին ընկնում իրենց լայնահուն գիտելիքներով և ոչ միայն հարազատ ժողովրդի հին ու նոր հարուստ բառ ու բանին, այլև արևելյան և արևմտյան ազգերի մի շարք գրական-գեղարվեստական հուշարձաններին, բանագիտության պատմության ու տնտեսության ընդհանուր հարցերին քաջատեղյակությամբ: Նրանք առաջինը ձեռնամուխ եղան իրենց ժողովուրդների բանահյուսության ու ազգագրության հարցերն օտար ժողովուրդների բանահյուսությունների հետ ունեցած առնչությունների տեսանկյունից քննելու և դրանով հետազո-

40 Սրվանձտյանց Գ., Երկեր, հատ. 1, էջ 38-39:

41 Sadeq H., 62վ. աշխ., p. 259.

տությունը գիտական ճիշտ ուղու վրա դնելու գործին: Նրանք այնքան էին խորամուխ եղել բանահյուսության և ազգագրության մեջ, որ դրանց տարրերն օգտագործեցին իրենց գեղարվեստական ստեղծագործություններում: Նրանց արձակը պարզապես ողողված է ժողովրդական բառ ու բանով:

## Եզրակացություններ

Բազմակողմանիորեն կրթված և ժողովրդական կենցաղին ու բանահյուսությանը քաջատեղյակ լինելով՝ Գ. Սրվանձտյանցը և Ս. Հեդայատը ստեղծեցին իրենց ոճն ու իրականության պատկերման գեղարվեստական եղանակը՝ թողնելով նշանակալից գրական ժառանգություն: Նրանց ստեղծագործություններում կենտրոնական տեղ են զբաղեցնում երկիրը, հասարակ ժողովուրդն ու նրա կենցաղը, որոնց էլ նվիրել են իրենց լավագույն պատմվածքները: Բարեկամ հայ և պարսիկ ժողովուրդների ծոցից ելած այս մեծ լուսավորիչների գիտական ժառանգությունը և գրական-լուսավորական գործունեությունը միտված էին ժողովուրդների ինքնագիտակցությունն արթնացնելու, նրանց դիմադրության ոգի ներշնչելու և ուժ հաղորդելու նպատակներին:

**Անահիտ Ի. Յահյամասիհի** - ունի տասից ավելի գիտական հոդվածներ՝ տպագրված Իրանի, Գերմանիայի և Հայաստանի Հանրապետության հանդեսներում: Զբաղվում է նաև թարգմանական աշխատանքներով:

## Summary

### **GAREGIN SRVANDZTIANTS AND SADEGH HEDAYAT**

A Comparative Examination of the Activities of Armenian and Persian Pioneers in Ethnography and Philology

Anahit I. Yahyamasihi

**Key words** - Garegin Srvandztiants, Sadegh Hedayat, leading, culture, folklore, ethnography, preservation, Iran, Armenia, patriotism.

Ethnography and folkloristics as science formed in Armenia in the early 19th century and relatively late in the early 20th century in Iran and found their place in the cultural and art system. Garegin Srvandztiants and Sadegh Hedayat have their permanent place in Armenian and Persian literature.

Along with folklore studies, they traveled and focused on their native land, people's lifestyle, beliefs, customs and traditions, spoken language, behavior and habits.

The Srvandztiants-Hedayat parallels show that literary critics of two different nations and faiths shared the same ideas, style, thinking, and taste in the field of collection of folklore.

Their literary talents had been revealed since their years of adolescence as they struggled vigorously against their own and foreign oppressors.

Srvandztiants' and Hedayat's greatest service was the organization of the collection of folklore – the popular word, and the effort to put it on a scientific basis. They were so profound in folklore and ethnography that they introduced them to the field of their artistic compositions. Their prose was just overflowed with people's folklore.

G. Srvandztiants, with his collections "Written and Oral Compositions" ("Grots-Brots"), "The Door of David of Sasoon and Mher", "About the Old and New" ("Hnots and Norots"), "Manana", "With Taste and Smell" ("Hamov-Hotov"), presented himself as a profound researcher thus establishing the Armenian ethnographic-scholarly teaching. And after the publication of Hedayat's works of "Osane" ("Fairy Tale") and "Neyrangestan" ("The Land of Wonders"), studies of ethnography and folklore gained new momentum in Iran.

Not only were the folklorists diligently involved in the study of folklore, they also encouraged their close ones to be supportive and to cooperate. By their exhortation, many materials were saved from loss, and many researchers began to engage in folkloristic work. It should be emphasized that with their services, G. Srvandztiants and S. Hedayat, became the teachers of many in the field of respectively the Armenian and Iranian ethnography and folkloristics.

Резюме

## **ГАРЕГИН СРВАНДЗТЯНЦ И САДЕГ ХЕДАЯТ**

Сравнительное изучение деятельности зачинателей армянской и персидской этнографии и фольклористики

Анаит И. Яхямасихи

**Ключевые слова** - Гарегин Сrvандзтянц, Садег Хедаят, ведущий, культура, фольклор, этнография, сохранение, Иран, Армения, патриотизм.



Этнография и фольклористика как науки сформировались и нашли свое место в системе культуры и искусства в Армении в начале 19-го века, а в Иране – сравнительно позже, в начале 20-го века. Непреходящее место в армянской и персидской литературе занимают Гарегин Срвандзтянц и Садег Хедаят.

Наряду с фольклористическими исследованиями они путешествовали и в центре их внимания были родная природа, быт народа, верования, обычаи и традиции, разговорный язык, жизненный уклад.

Параллели Срвандзтянц – Хедаят показывают, что в области работы по собиранию фольклора литературоведы разной национальности и веры находились на тех же позициях в идеях, стиле, мышлении и вкусе.

Их литературоведческое дарование проявилось еще с юношеских лет. Они непоколебимо боролись против своих и чужеземных угнетателей.

Величайшей заслугой Срвандзтянца и Хедаята были организация собирания фольклора – народного словесного творчества, и старание поставить эту работу на научную основу. Они были настолько углублены в фольклор и этнографию, что вносили их в пределы своих художественных произведений. Их проза была просто заполнена элементами народной словесности.

Своими сборниками «Письменно и устно», «Давид Сасунский и Двери Мгера», «У древних и новых», «Манна», «Вкусно-ароматно» Г. Срвандзтянц выступал как вдумчивый исследователь, основав армянское этнографическо-фольклористическое учение. А после опубликования трудов С. Хедаята «Осане» («Сказка») и «Нейрангестан» («Страна чудес») в Иране с новой силой развиваются этнографические и фольклористические исследования.

Фольклористы не только сами усердно занимались исследованием фольклора, но и побуждали своих друзей к содействию и сотрудничеству. Благодаря их призывам, многочисленные материалы были спасены от исчезновения и многие исследователи стали заниматься научной фольклористической работой. Необходимо подчеркнуть, что своими заслугами Г. Срвандзтянц стал учителем многих исследователей в области армянской этнографии и фольклористики, а С. Хедаят – иранской.

## REFERENCES

1. **Bdoyan V.**, Hay azgagrut‘yun, Yer., YePH hrat., 1974 (**In Armenian**).
2. **Bolükbāši A.**, Dar farhang-e xod zīstan va bē farhang-e dīgarī nēgarīstan, 2<sup>nd</sup> print, Tehran, ēntēš. Golāzīn, 1389.
3. **Ēnjavī Šīrāzī A. and Zarīfyān M.**, Gozarī o nazarī dar farhang-e mardom, Tehran, ēntēš. Ēsparg, 1371.
4. **Ghanalanyan A.**, Drvagner hay banagitut‘yan patmut‘yan, Yer., 1985 (**In Armenian**).

5. **Harut'yunyan S.**, Hay hmayakan yev zhoghovrdakan aghot'k'ner, Yer., YePH hrat., 2006 (**In Armenian**).
6. **Hēdāyat S.**, Farhang-e 'āmyāne-ye mardom-e Īrān, 6<sup>th</sup> print, Tehran, ēntēš. Čēšmē, 1385.
7. **Kisljakov N.**, Sovetskaja etnografija-2, M.- L., 1949 (**In Russian**).
8. **Komitas**, Yerkeri zhoghovatsu, hat. 10, kazmets' yev tsanot'agrets' R. At'ayanē, Yer., 2000 (**In Armenian**).
9. **Kostandyan Ē.**, Garegin Srvandztyants' (Kyank'ē yev gortsuneut'yunē), Yer., HH GAA PI, 2008 (**In Armenian**).
10. **Majalē-ye Mūsīqī**, Sādeq Hēdāyat, tarānēhāye 'āmyānē, 1318, sal-e aval, no. 9.
11. **Majalē-ye Mūsīqī**, Sādeq Hēdāyat, tarānēhāye 'āmyānē, 1318, sal-e aval, no. 6-7.
12. **Majalē-ye Mūsīqī**, Āqā mūšē, Šangūl va mangūl, 1318, sal-e aval, no. 8. Lačak kūčūlūyē qērmēz, 1319, sal-e dovom, no. 2. Sang-e Sabūr, 1320, sal-e dovom, no. 6-7.
13. **Majalē-ye Sēpīd o sīyāh**, 1346, vol. 15, no. 11, p. 15.
14. **Majalē-ye Soxan**, ēsfand 1323, 2<sup>nd</sup> year, no. 3.
15. **Majalē-ye Soxan**, farvardin 1324, 2<sup>nd</sup> year, no. 4.
16. **Majalē-ye Soxan**, ordībēhēšt 1324, 2<sup>nd</sup> year, no. 5.
17. **Majalē-ye Soxan**, xordād 1324, 2<sup>nd</sup> year, no. 6.
18. **Monti V.**, Sādēq Hēdāyat va āsār-e ū, tr. H. Qāēmyān, 1<sup>st</sup> print, Tehran, ēntēš. Osture, 1382.
19. **Qāsēmzādē M.**, Rūy-e jādē-ye namnāk, 2<sup>nd</sup> print, Tehran, ēntēš. Kārun, 1387.
20. **Rūznāmē-ye Ēttelā'āt**, gōftōgū bā Ēnjavī Šīrāzī darbārē-ye Hēdāyat, Tehran, 1354, no. 14938.
21. **Srvandztyants' G.**, Yerker, hat. 1, Yer., Haykakan SSH GA hrat., 1978 (**In Armenian**).
22. **Srvandztyants' G.**, Yerker, hat. 2, Yer., Haykakan SSH GA hrat., 1982 (**In Armenian**).